ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/123

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ

Թ. Հովեսյանի (լիազորագիր տրված՝ 15.06.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 11.06.2020թ. թիվ 26/26-1/8681-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի՝ 05.06.2020թ. թիվ 01/61-9249 գրության հիման վրա, 11.06.2020թ. թիվ 26/26-1/8681-2020 գրությամբ նախաձեռնել է «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ, գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/123 ընթացակարգի շրջանակներում 16.06.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>3. Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 05.06.2020թ. թիվ 01/61-9249 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020 թվականին կնքվել են «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրերով գնման պայմանագրերը (հետայսու նաև՝ Պայմանագիր):

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ջրավազանի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (հետայսու նաև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի թվով 5 պոլիկլինիկաների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (հետայսու նաև՝ Աշխատանքներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքները կատարվում են Պայմանագրերի թիվ 1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով»:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացույցային օրը ներառյալ, որը ավարտվում է 04.04.2020թ., իսկ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացույցային օրը ներառյալ, որը ավարտվում է 04.04.2020թ., սակայն, Ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

Պատվիրատուն վկայակոչել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասը, 408-րդ հոդվածը, 466-րդ հոդվածի 3-րդ մասը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետը, Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ գնման աշխատանքների պայմանագրերից՝ համարելով դրանք լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթը:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն առաջարկել է, վերը նշված իրավական հիմքերով պայմանավորված նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերությունով, «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/123 ընթացակարգի շրջանակներում 16.06.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/123 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/123 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020թ. կնքվել են «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրերով աշխատանքների գնման պայմանագրեր:

2. «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղղված 02.06.2020թ. թիվ 01/61-8887 ծանուցմամբ՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրերով սահմանված պարտավորությունները, ուստի Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ գնման աշխատանքների պայմանագրերից՝ համարելով դրանք լուծված:

3. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 02.06.2020թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.06.2020թ. թիվ 26/26-1/8681-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 05.06.2020թ. թիվ 01/61-9249 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.02.2020թ. կնքվել են «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» և «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրերով աշխատանքների գնման պայմանագրեր:

Թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ջրավազանի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքի թվով 5 պոլիկլինիկաների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացույցային օրը ներառյալ, որը ավարտվել է 04.04.2020թ., իսկ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրով պայմանագրի թիվ 1 հավելվածով աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացույցային օրը ներառյալ, որը ավարտվել է 04.04.2020թ., սակայն, Ընկերության կողմից սահմանված ժամկետում պայմանագրերով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ուղղված 02.06.2020թ. թիվ 01/61-8887 ծանուցմամբ՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրերով սահմանված պարտավորությունները, ուստի Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է Ընկերության հետ գնման աշխատանքների պայմանագրերից՝ համարելով դրանք լուծված:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 02.06.2020թ. հրապարակվել են Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

բ) ***խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:***

Այսպես՝ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն իր և Երևանի քաղաքապետարանի միջև 20.02.2020թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/12» Պայմանագրով ստանձնել է Պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված Երևան քաղաքի Հանրապետության հրապարակի ջրավազանի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորություն և 20.02.2020թ. կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/13» Պայմանագրով՝ Պայմանագրի Հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված Երևան քաղաքի թվով 5 պոլիկլինիկաների վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորություն, որոնց կատարման ժամկետներ են նախատեսվել Պայմանագրերն ուժի մեջ մտնելու օրվանից 45-րդ օրացույցային օրը ներառյալ:

Արձանագրում եմ, որ համաձայն գործում առկա նյութերի, Պայմանագրերը լուծելու օրվա դրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն Պայմանագրերով նախատեսված աշխատանքները չի իրականացրել, խախտելով աշխատանքների կատարման ժամկետները, որի հետևանքով «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն թույլ է տվել Պայմանագրերի էական խախտումներ, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրերի միակողմանի լուծման:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի

«ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.06.2020թ. թիվ 26/26-1/8681-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**